կ՚անցունէր՝ որ ճակատագիրն եթէ զինքը վեստայի տաճարին մէջ միայնութեան դատապարտած չըլլար, ինքն ալ երջանիկ պիտի ըլլար։ Հառաչանք մի իր կուրծքը ուռեցուց, ցաւ մի յայտնուեցաւ հոգւոյն մէջ, բայց վայրկեան մի միայն տեւեց։ Ինք զինքն սկսաւ մեղադրել։

Դոմիտիլլայի մօտենալով՝ պզտիկներէն մին իր ծնկաց վրայ առաւ և ըսաւ.

— Ի՛նչ սիրուն տղայք են, և ո՛րչափ երջանիկ ես անոնց մայրն ըլլալով։

Եւ սկսաւ տղայն խաղցնել։

— Գուցէ զանոնք չափէն աւելի կը սիրեմ, ըսաւ մայրն, միայն իրենց համար կեանքս սիրելի է ինձ։

— Աստուածներն թող քեզ ժամանակ տան՝ որ անոնց ծերութիւնը տեսնես. և ո՛ւր էր թէ, ո՛վ երջանիկ մայր, անոնց մահուամբ չի վշտանայիր։

— Միակ փափաքս է որ կարենամ ապրիլ այնչափ՝ որքան պիտոյ է զաւակացս յաւիտենական երջանկութիւնը տանող ճամբան սորվեցնելու, ըսաւ Դոմիտիլլա, յուզմամբ սեղմելով Կուռնելիայի ձեռքը, կարծես ըսած մաղթանացն համար շնորհակալ ըլլալով։

— Սիրելիք, պէտք է զձեզ ձգեմ, ըսաւ Կուռնելիա՝ տղայն գետին դնելով. հիմակ տաճար կը դառնամ, և այս իրիկուն, երբ գիշերն մօտենայ, կ՚երթամ Սեքստոսը տեսնելու... Մնաք բարեաւ։

Եւ հեռացաւ, տղայքն ալ ետեւէն, որ խընդալով վերարկուին ծայրէն կը քաշէին որ չերթայ։

Ժամ մի յետոյ Փլորոնիա այլ պատրաստուեցաւ հիւպատոսի տունէն մեկնելու.

— Աղօթէ Կուռնելիայի համար, ըսաւ Դոմիտիլլա, որպէս զի Ամենակալն լուսաւորէ իր հոգին և ազատէ զնա զինքը շրջապատող վտանգներէն։

— Կուռնելիա երկինքը հրեշտակ մ՚ունի՝ որ կը հսկէ իր վրայ, և փառաւորեալ աղօթքն աւելի ընդունելի կ՚ըլլայ քան թէ ինձ պէս խեղճ մեղաւորինը։...

— Այն որ ըսաւ. « Բաղխեցէք և բացցի ձեզ, հայցեցէք և տացի ձեզ, » կը լսէ արդարոյն և մեղաւորին աղօթքները, պատասխանեց Դոմիտիլլա, բաժնուելով Փլորոնիայէ՝ որ Անիկետոսի տան ճամբան բռնեց։

(Շարայարելի)

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԻ ԱՌ Լ. Բ.

Հայրենիք օրագրին յունիսի 21ի թուոյն մէջ խօսելով Արմաշու եօթն նորընծայ ձեռնադրելոց վերայ, և չկարենալով զսպել ազգին մի նոր լոյս ճառագայթելու եռանդը—տեղին թէպէտ յարմար՝ թէպէտ անյարմար – ի նպաստ իրենց իմաստասիրական գաղափարաց, մի կարեկցական զարմացմամբ կը հարցնէ. « Դեռ չգիտցողներ կա՞ն, թէ այդ թուականին (Դ դար) կուսակրօն քահանայութիւնը դուրսէն (փողոցէ՞ն) մեր մէջ մտած չէր, և թէ Լուսաւորիչ ամուսնացած էր, ինչպէս նա և Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ կաթողիկոսները և այլն »։

Յօդուածագի՛րդ Հայրենիքի, ազգին մէջ անթիւ են այդպիսի ազէտներ. և շատ չեն կարմրիր անոնք, տեսնելով կարմրելու անտրամաբանիր ուրիշ խումբ մի չգիտցողներ՝ թէ այդ թուականին կուսակրօն քահանայութիւնը աւետարանի հետ մեր մէջ մտած էր, և թէ Արիստակէս ամուսնացած չէր, ինչպէս նա և Գրիգորիս կաթողիկոսը և այլն. և թէ Լուսաւորիչ, Վրթանէս և Յուսիկ հայրապետութենէ յառաջ հրաժարած էին իրենց կանանցմէ։

Հ.

digitised by A.R.A.R.@